

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. հունվարի 27-ի թիվ 10-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 6
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 16
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 17
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 19
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 28
8. Հետհսկողական գործընթաց - էջ 36
9. Առաջարկություններ - էջ 39

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 252-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1330-Ն որոշում և այլն:
Հաշվեքննությունն	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի

**ընդգրկող
ժամանակաշրջանը**

սեպտեմբերի 30-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը**

2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 132-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցումներ (ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից թվով 1 և հաշվեքննողների կողմից՝ թվով 7), արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Եղիշե Սողոմոնյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 2** – (1045-120034) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 3** – (1111-12003) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

4. **Ծրագիր 4** – (1115-12001) «Աջակցություն երիտասարդ ընտանիքներին» («Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում) ծրագիր:

5. **Ծրագիր 5** – (1146-12003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» (Պարտադիր կրթության երրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում) ծրագիր:

6. **Ծրագիր 6** – (1146-11011) «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն» (Հիմնական կրթության մակարդակում մասնագիտացված հանրակրթական ծառայությունների մատուցման միջոցով սովորողների ընդգրկվածության և գրագիտության ապահովում) ծրագիր:

7. **Ծրագիր 7** – (1168 - 11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային ներկայացումներ) (Օպերային և բալետային արվեստի ներկայացումների բեմադրություն, թատրոնի գործունեության ապահովում, ազգային օպերային և բալետային արվեստի խթանում) ծրագիր:

8. **Ծրագիր 8** – (1168 - 11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) (Թատերական ներկայացումների բեմադրություններ և թատրոնների գործունեության ապահովում) ծրագիր:

9. **Ծրագիր 9** – (1168 - 11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) (Երաժշտական, պարային, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովում և համերգային ծրագրերի իրականացում) ծրագիր:

10. **Ծրագիր 10** – (1192 - 32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» (Կապիտալ ներդրումներ ավագ,

միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում) /ԿՏԱԿ/» ծրագիր:

11. **Ծրագիր 11** – (1148 - 11001) «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր:
12. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից Ծրագիր 11-ը** ներառյալ:
13. **Բուհ** - Բարձրագույն ուսումնական հաստատություն:
14. **ԱԱՀ** – Ավելացված արժեքի հարկ:
15. **ԿԲ** – ՀՀ Կենտրոնական բանկ:
16. **ԾԻԳ** - «Կրթական ծրագրերի կենտրոն» Ծրագրի իրականացման գրասենյակ:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. ինն ամիսների պլանի ճշտման (հանրագումարով նվազեցման) հետևանքով առաջացած ընդհանուր տարբերությունը կազմել է՝ 438,824.9 հազ. դրամ, որից 506,985.7 հազ. դրամը նվազեցվել է ՀՀ կառավարության որոշումներով, իսկ 68,160.8 հազ. դրամը՝ վերադասի կողմից սահմանված կարգով ավելացել է վերաբաշխման միջոցով: Նշված տարբերությունների հիմնավորումները տրված են ստորև (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների պլանի և ճշտված պլանի տարբերությունների հիմնավորումների

(հազ. դրամ)

2021թ. ինն ամիսներ					
Ժամ	Պլան	Վերաբաշխում (+, -)		Ճշտված պլան	Հիմնավորումներ
		ՀՀ կառավարության որոշումներով	Վերադասի կողմից		
Ծրագիր 1					
1	1,822,918.2	-50,000.0	0,0	1,772,918.2	ՀՀ կառավարության 2021թ. մարտի 25-ի թիվ 397-Ն որոշում:
Ծրագիր 2					
2	5,638,472.8	-392,388.9	0,0	5,246,083.7	ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն, 2021թ. մարտի 25-ի թիվ 397-Ն և 2021թ. մայիսի 27-ի թիվ 887-Ն որոշումներ:
Ծրագիր 4					
3	1,200,675.0	-98,709.9	0.0	1,101,965.1	ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 5-ի թիվ 143-Ն և 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն որոշումներ:
Ծրագիր 5					
4	5,659,609.6	39,758.2	79,404.4	5,778,772.2	ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 353-Ն և 2021թ. սեպտեմբերի 24-ի թիվ 1568- որոշումներ և վերադասի կողմից սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարության ծանուցմամբ:
Ծրագիր 11					
5	1,837,553.9	-5,645.0	-11,243.6	1,820,665.3	ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 24-ի թիվ 1042-Ն որոշում և վերադասի կողմից սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարության ծանուցմամբ:
Ընդամենը՝		- 506,985.7	68,160.8		

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում (բացառությամբ՝ Ծրագիր 5-ի, Ծրագիր 7-ի, և Ծրագիր 9-ի) 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի հանդեպ թերֆինանսավորումները կազմել են ընդհանուր 2,993,082.6 հազ. դրամ, որոնց պատճառները կապված են մի շարք հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում ճշտված պլանի նկատմամբ
թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	2021 թ. ինն ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան- սավորում	Թերֆինան- սավորում	
1	2	3	4	5	6
1	Ծրագիր 1	1,772,918.2	1,617,560.4	155,357.8	Պայմանավորված է Նախարարության 2021թ. առաջին կիսամյակի ֆինանսական միջոցների ավել նախատեսմամբ: Գումարը կիրացվի 2021թ. չորրորդ եռամսյակում, ուսումնարանների և քոլեջների 2021/2022թթ. ուսումնական տարվա ընդունելությունից հետո:
2	Ծրագիր 2	5,246,083.7	4,895,220.3	350,863.4	
3	Ծրագիր 3	6,570,252.6	6,569,406.8	845.8	Պայմանագրերի և բյուջեի եռամսյակային բաշխվածության տարբերություն, որը կփոխանցվի 2021թ. չորրորդ եռամսյակում:
4	Ծրագիր 4	1,101,965.1	1,001,320.1	100,645.0	Պայմանավորված է փաստացի սուբսիդավորվող ընդանիքների և վարկառուների թվով:
5	Ծրագիր 6	1,267,338.2	1,166,341.5	100,996.7	Տարբերությունը պայմանավորված է սովորողների փաստացի թվով և իննամսյա ծրագրավորման ավել նախատեսմամբ:
6	Ծրագիր 8	1,359,822.3	1,331,788.5	28,033.8	Նշված գումարաչափով Նախարարությունը «Խորեոգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի հետ դրամաշնորհի պայմանագիր չի կնքել՝ դատական ընթացակարգերի պատճառով (25,811.9 հազ. դրամ), ինչպես նաև՝ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ավելացված արժեքի հարկի վերադարձի պատճառով (2,221.9 հազ. դրամ):

1	2	3	4	5	6
7	Ծրագիր 10	2,820,139.6	564,027.8	2,256,111.8	Թերֆինանսավորման բացատրությունը տրված է ստորև*:
8	Ծրագիր 11	1,820,665.3	1,820,437.0	228.4	Պայմանավորված է ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած տնտեսամասը:
Ընդամենը՝				2,993,082.6	

* Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած 2,256,111.8 հազ. դրամի տարբերությունն ունի հետևյալ պարզաբանումը.

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված 564,027.8 հազ. դրամը բաշխված է միայն համաֆինանսավորման միջոցների մասով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը՝ ըստ վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի: Ցուցանիշների համադրելիությունն ապահովելու համար ֆինանսավորման մեջ անհրաժեշտ է ներառել նաև վարկային միջոցների ֆինանսավորման ցուցանիշը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 1,350,621.9 հազ. դրամ, այդ թվում՝ 511300 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով 1,182,691.2 հազ. դրամ, 512900 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով 167,930.7 հազ. դրամ: Արդյունքում, ֆինանսավորման հանրագումարը ֆինանսավորման երկու միջոցներից 2021թ. ինն ամիսների ընթացքում կազմել է ընդամենը 1,914,649.7 հազ. դրամ $(1,182,691.2 + 167,930.7)$: 2021թ. ինն ամիսների ավարտին ճշտված պլանի և ֆինանսավորման իրական տարբերությունը կազմել է 905,489.9 հազ. դրամ $(2,820,139.6 - 1,914,647.7)$, այդ թվում՝ 511300 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով 841,040.5 հազ. դրամ, 512900 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով 64,449.4 հազ. դրամ:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից միայն Ծրագիր 10-ում 2021թ. ինն ամիսների ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև տարբերությունը կազմել է 1,406,543.8 հազ. դրամ, որն ունի հետևյալ պարզաբանումը.

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Ծրագիր 10-ում 2021թ. ինն ամիսների ԾԻԳ-ի ֆինանսավորման և դրամարկղային ծախսի նշված տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ֆինանսավորումն արտացոլված է միայն համաֆինանսավորման միջոցների ֆինանսավորման ցուցանիշով, իսկ «Դրամարկղային ծախս» սյունակի

ցուցանիշը ներկայացված է համաֆինանսավորման և վարկային միջոցների հանրագումարով: Բացի այդ իրական դրամարկղային ծախսը նշված ժամանակահատվածում կազմել է 1,956,397.8 հազ. դրամ, որից վարկային միջոցներից 1,565,118.3 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 391,279.6 հազ. դրամ, իսկ 14,173.7 հազ. դրամ տարբերությունը (1,970,571.6 - 1,956,397.8), որը 2021թ. մարտի 1-ից հետո ԾԻԳ-ին պատկանող արտարժույթային 900000900317 և 900000900325 հաշիվներից ելքագրվող իրական դրամային գումարները փոխարկվել են արտարժույթի՝ ԿԲ-ի կողմից սահմանված առքի փոխարժեքով, իսկ 0754900000900317 և 0754900000900325 ՀՀ գանձապետական համակարգում արտարժույթային գումարները դրամով արտացոլման հաշիվներում հաշվառվել են ԿԲ-ի կողմից նույն օրվա համար սահմանված վաճառքի փոխարժեքով (ՀՀ ֆինանսների նախարարի 30.12.2020թ. թիվ 01/7-3/19739-2020 գրություն):

Վերոնշյալի արդյունքում 2021թ. ինն ամսվա ավարտին ֆինանսավորման և դրամարկղային ծախսի իրական տարբերությունը կազմել է 41,748.1 հազ. դրամ (1,914,649.7 - 1,956,397.9):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. ինն ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի միջև ընդհանուր տարբերությունը կազմել է 279,359.8 հազ. դրամ, ընդ որում ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 5-ում (Ծրագիր 3, Ծրագիր 4, Ծրագիր 6, Ծրագիր 7, Ծրագիր 8 և Ծրագիր 9) դրամարկղային ծախսը գերազանցել են փաստացի ծախսին (ընդհանուր՝ 602,752.6 հազ. դրամով), իսկ մնացած թվով 5-ում փաստացի ծախսը գերազանցել է դրամարկղային ծախսին (ընդհանուր՝ 882,112.4 հազ. դրամով):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. ինն ամիսների փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի, նվազումների համամասնությունները պայմանավորված են՝

1. Դեբիտորական պարտքերի գծով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, դրամական միջոցների մնացորդների և պահեստում ապրանքանյութական պաշարների առկայությամբ, արձակուրդային գումարների վճարներով, ինչպես նաև տարվա սկզբի դեբիտորական պարտքի մարմամբ և 2021թ. սեպտեմբեր ամսվա կոմունալ վճարներով:

2. Կրեդիտորական պարտքերի գծով 2021թ. սեպտեմբեր ամսվա հաշվարկված, բայց հոկտեմբեր ամսին վճարված կոմունալ ծախսերի, ինչպես նաև աշխատավարձերի, արձակուրդային վճարների և կրեդիտորական պարտքերի մարմամբ:

3. Տարեկան կնքված ուսանողնական նպաստների, սուբսիդիաների տրամադրման պայմանագրերի թվերը վերջնական համաձայնագրերով ճշգրտվում են ուսանողների (սովորողների) միջին տարեկան թվի հետ:

4. 2021թ. ինն ամիսների Ծրագիր 10-ի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև առաջացել է 359,419.0 հազ. դրամի տարբերություն: 2021թ. ինն ամսվա ավարտին փաստացի և դրամարկղային ծախսի իրական տարբերությունը կազմել է 373,592.7 հազ. դրամ (2,329,990.6 - 1,956,397.9), այդ թվում 511300 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ 331,690.5 հազ. դրամ, 512900 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով՝ 41,902.2 հազ. դրամ: Փաստացի ծախսի և դրամարկղային ծախսի տարբերությունը պայմանավորված է հետևյալով հանգամանքներով.

4.1 Համաձայն կապալառուների հետ կնքված պայմանագրերի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների կատարողական ակտերից համամասնորեն մարվել են 2019թ. փոխանցված կանխավճարային գումարները, ինչպես նաև կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից պահվել է երաշխիքային գումար 5%-ի չափով՝ մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը;

4.2 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին առկա են կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների դիմաց չվճարված գումարներ, որոնց վճարումները իրականացվել են հաջորդ ամսվա ընթացքում:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. ինն ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի տարբերությունների վերաբերյալ
(հազ. դրամ)

Ե	Ծ Ը Յ	2021թ. ինն ամիսներ
---	-------	--------------------

		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորա- կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտոր- ական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 - Սյունակ 5 (+, -)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ծրագիր 3	6,569,406.8	6,405,590.9	-163,815.9	151,108.7	0.0	151,108.7	-12,707.2
2	Ծրագիր 4	1,001,320.1	874,717.0	-126,603.1	0.0	126,603.0	126,603.0	-0.1
3	Ծրագիր 6	1,166,341.5	1,048,080.5	-118,261.0	189,972.1	71,711.1	118,261.0	0.0
4	Ծրագիր 7	1,101,491.8	999,280.1	-102,211.7	102,211.7	0.0	102,211.7	0.0
5	Ծրագիր 8	1,331,788.5	1,276,250.2	-55,538.3	55,538.3	0.0	55,538.3	0.0
6	Ծրագիր 9	2,108,651.8	2,072,329.2	-36,322.6	36,322.6	0.0	36,322.6	0.0
Ընդամենը՝ (Դրամարկղային ծախսի հանդեպ Փաստացի ծախսի գերազանցումով)		13,279,000.5	12,676,247.9	-602,752.6	535,153.4	198,314.1	590,045.3	-12,707.2

1	2	3	4	5	6	7	8	9
7	Ծրագիր 1	1,617,560.4	1,640,613.1	23,052.7	60,056.5	83,109.2	-23,052.7	0.0

8	Ծրագիր 2	4,895,220.3	5,014,191.7	118,971.4	136,014.9	257,859.7	-121,844.8	-2,873.4
9	Ծրագիր 5	5,778,772.2	6,117,695.7	338,923.5	-56,317.7	282,605.8	-338,923.5	0.0
10	Ծրագիր 10**	1,970,571.6	2,329,990.6	359,419.0	-36,312.2	38,406.4	-74,718.5	284,700.4
11	Ծրագիր 11	1,820,437.0	1,862,182.8	41,745.8	72,492.5	114,477.3	-41,984.8	-239.0
Ընդամենը՝ (Փաստացի ծախսի հանդեպ դրամարկղային ծախսի գերազանցումով)		16,082,561.5	16,964,673.8	882,112.4	175,934.1	776,458.4	-600,524.4	281,588.0

ԱՄԲՈՂՋԸ ԾՐԱԳՐԵՐ	29,361,562.0	29,640,921.8	279,359.8	711,087.5	974,772.5	-10,479.0	268,880.8
--------------------	--------------	--------------	------------------	-----------	-----------	------------------	------------------

** Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. ինն ամիսների ավարտին փաստացի և դրամարկղային ծախսերի իրական տարբերությունը կազմել է 373,592.7 հազ. դրամ (2,329,990.6 - 1,956,397.9), այդ թվում՝ 511300 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ 331,690.5 հազ. դրամ, 512900 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով՝ 41,902.2 հազ. դրամ:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների ամփոփ կատարողականը կազմել է 90,3 %, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 67,9 %, ԾՐԱԳՐԵՐ-ի

2021թ. ինն ամիսների պլանի մնացորդը հանրագումարով կազմել է 2,993,082.6 հազ. դրամ, իսկ տարեկան պլանի մնացորդը՝ 13,200,257.3 հազ. դրամ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների կատարողականների, 2021թ. ինն ամիսների և տարեկան պլանի մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև (տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների կատարողականների, 2021թ. ինն ամիսների և տարեկան պլանի մնացորդների վերաբերյալ վերաբերյալ
(հազ. դրամ)

ԾՐԱԳՐԵՐ	Տարեկան պլան	Փոփոխություններ տարեկան պլանում		Տարեկան ճշտված պլան	Կատարողա- կաններ (%)		Պլանի մնացորդ	
		ՀՀ կառավա- րության կողմից	Վերադասի կողմից		Ինն ամիսների	Տարեկան	Ինն ամիսների	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9
Ծրագիր 1	2,430,557.6	0.0	-50,000.0	2,380,557.6	91.2	67.9	155,357.8	762,997.2
Ծրագիր 2	7,517,963.6	-587,46 1.3	0.0	6,930,502.3	93.3	70.6	350,863.4	2,035,282.0
Ծրագիր 3	9,453,600.8	-333,562.6	0.0	9,120,038.2	100.0	72.0	845.8	2,550,631.4
Ծրագիր 4	1,600,900.0	-300,000.0	0.0	1,300,900.0	90.9	77.0	100,645.0	299,579.9
Ծրագիր 5	8,085,156.6	-15,606.1	120,000.0	8,189,550.5	100.0	70.6	0.0	2,410,778.3
1	2	3	4	5	6	7	8	9
Ծրագիր 6	1,810,483.2	0.0	0.0	1,810,483.2	92.0	64.4	100,996.7	644,141.7

Ծրագիր 7	1,439,533.1	0.0	0.0	1,439,533.1	100.0	76.5	0.0	338,041.3
Ծրագիր 8	1,784,733.0	0.0	0.0	1,784,733.0	97.9	74.6	28,033.8	452,944.5
Ծրագիր 9	2,770,649.5	0.0	0.0	2,770,649.5	100.0	76.1	0.0	661,997.7
Ծրագիր 10	2,820,139.6	0.0	0.0	2,820,139.6	69.9	69.9	2,256,111.8	2,256,111.8
Ծրագիր 11	2,625,077.0	-5,645.0	-11,243.6	2,608,188.4	100.0	69.8	228.4	787,751.5
Ընդամենը՝	42,338,794.0	-1,242,275.0	58,756.4	41,155,275.4	90.3	67.9	2,993,082.6	13,200,257.3

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. ինն ամիսների ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար դիտարկվել են նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականները: Հաշվեքննության ժամանակ կարևորվել է ՀՀ կառավարություն ներկայացրած բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններում բերված ցուցանիշներով փաստացի կատարվածի իրական ծավալների ընդգրկելու խնդիրները:

Նախարարության 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. տարեկան ընդհանուր պլանը կազմել է 42,338,794.0 հազ. դրամ, ճշտված տարեկան պլանը՝ 41,155,275.4 հազ. դրամ, տարբերությունը՝ 1,229,912.5 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով 1,242,275.9 հազ. դրամի ընդհանուր նվազեցումներով (Ծրագիր 2-ում 587,461.3 հազ. դրամով, Ծրագիր 3-ում 587,461.3 հազ. դրամով, Ծրագիր 4-ում 300,000.0 հազ. դրամով, Ծրագիր 5-ում 15,606.1 հազ. դրամով /նվազեցում/ և Ծրագիր 11-ում 5,645.0 հազ. դրամով /նվազեցում/), ինչպես նաև սահմանված կարգով 58,756.4 հազ. դրամի ընդհանուր ավելացումներով՝ վերադասի կողմից վերաբաշխման միջոցով: Վերադասի կողմից Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան պլանի վերաբաշխումները վերաբերում են Ծրագիր 5-ում 120,000.0 հազ. դրամի ավելացումներին և Ծրագիր 1-ում 50,000.0 հազ. դրամի և Ծրագիր 11-ում 11,243.6 հազ. դրամի նվազեցումներին:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների պլանը կազմել է 31,386,925.8 հազ. դրամ, իսկ ճշտված տարեկան պլանը՝ 30,948,100.8 հազ. դրամ, տարբերությունը՝ 438,824.9 հազ. դրամը, հիմնավորված է ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի վերը հիշատակված ՀՀ կառավարության որոշումներով և վերադասի կողմից սահմանված

կարգով վերաբաշխումներով՝ համապատասխան 2021թ. ինն ամիսների համամասնություններով:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 27,955,018.2 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 29,361,562.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 29,640,921.8 հազ. դրամ: Նախարարության 2021թ. տարեկան և ԾՐԱԳՐԵՐ-ի ինն ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանիշները տրված են Աղյուսակ 5-ում և Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 5

Նախարարության 2021 թվականի տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, (ծածկագիրը)	2021թ. տարեկան պլան	Փոփոխություններ տարեկան պլանում (+, -)		2021թ. տարեկան ճշտված պլան	2021թ. ինն ամիսներ						Կարարման տրոհումը		
		ՀՀ կառավարության կողմից	Վերադարձի կողմից		2021թ. ինն ամիսների պլան	Փոփոխություններ 2021թ. ինն ամիսների պլանում (+, -)		2021թ. ինն ամիսների ճշտված պլան	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
						ՀՀ կառավարության կողմից	Վերադարձի կողմից						
Նախարարություն (104010)	74,230,901.6	-1,930,093.5	-1,037.0	72,299,771.1	35,516,875.6	269,947.9	-1,037.0	35,785,786.5	31,756,491.4	31,312,064.4	32,657,098.2	43,3	87,5

Աղյուսակ 6

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թ. ինն ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

ԾՐԱԳՐԵՐ	Ճշտված պլան	Ֆինանսավորում			Դրամարկղային ծախս			Փաստացի ծախս		
		Ընդամենը	Տեսակարար կշիռը ԾՐԱԳՐԵՐ-ի «Ֆինանսավորման» մեջ (%)	Տեսակարար կշիռը Նախարարության «Ֆինանսավորման» մեջ (%)	Ընդամենը	Տեսակարար կշիռը ԾՐԱԳՐԵՐ-ի «Դրամարկղային ծախսեր»-ի մեջ (%)	Տեսակարար կշիռը Նախարարության «Դրամարկղային ծախսեր»-ի մեջ (%)	Ընդամենը	Տեսակարար կշիռը ԾՐԱԳՐԵՐ-ի «Փաստացի ծախսեր»-ի մեջ (%)	Տեսակարար կշիռը Նախարարության «Փաստացի ծախսեր»-ի մեջ (%)
1	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր 1	1,772,918.2	1,617,560.4	5.8	3.2	1,617,560.4	5.5	3.2	1,640,613.1	5.5	3.3

Ծրագիր 10	2,820,139.6	564,027.8	2.0	1.1	1,970,571.6	6.7	3.9	2,329,990.6	7.9	4.6
Ծրագիր 9	2,108,651.8	2,108,651.8	7.5	4.2	2,108,651.8	7.2	4.2	2,072,329.2	7.0	4.1
Ծրագիր 8	1,359,822.3	1,331,788.5	4.8	2.7	1,331,788.5	4.5	2.7	1,276,250.2	4.3	2.5
Ծրագիր 7	1,101,491.8	1,101,491.8	3.9	2.2	1,101,491.8	3.8	2.2	999,280.1	3.4	2.0
Ծրագիր 6	1,267,338.2	1,166,341.5	4.2	2.3	1,166,341.5	4.0	2.3	1,048,080.5	3.5	2.1
Ծրագիր 5	5,778,772.2	5,778,772.2	20.7	11.5	5,778,772.2	19.7	11.5	6,117,695.7	20.6	12.2
Ծրագիր 4	1,101,965.1	1,001,320.1	3.6	2.0	1,001,320.1	3.4	2.0	874,717.0	3.0	1.7
Ծրագիր 3	6,570,252.6	6,569,406.8	23.5	13.1	6,569,406.8	22.4	13.1	6,405,590.9	21.6	12.8
Ծրագիր 2	5,246,083.7	4,895,220.3	17.5	9.8	4,895,220.3	16.7	9.8	5,014,191.7	16.9	10.0
1	5	6	7	8	9	10	11	12	13	14

Ծրագիր 11	1,820,665.3	1,820,437.0	6.5	3.6	1,820,437.0	6.2	3.6	1,862,182.8	6.3	3.7
ԸՆԴԱՄԵՆՆԸ՝	30,948,100.8	27,955,018.2	100.0	55.7	29,361,562.0	100.0	58.7	29,640,921.8	100.0	59.1

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022թ. հունվարի 11-ի թիվ ՀՊԵ-ԵՍ-04 գրությամբ ներկայացված առարկությունները, պարզաբանումներն ու մեկնաբանությունները Նախարարության կողմից տրամադրվել են 2022թ. հունվարի 25-ի թիվ 01/17.2/ 1518-2022 գրությամբ (այսուհետ՝ Գրություն 1):

6.1 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների հաշվեքննությամբ պարզվել է, որ.

6.1.1 «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն կատարվել է գնում ընդամենը թվով 439 չափաբաժիններով, 3,490.9 հազ. դրամի չափով, որը գնումների պլանում արտացոլված է 55 չափաբաժիններով: Գնումների միասնական անվանացանկով սահմանված միջանցիկ ծածկագիրը և անվանումը չի լրացվել անվանացանկի չորրորդ մակարդակին համապատասխան: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում 1) 3-րդ հավելվածի 2-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ ՊՈԱԿ-ի ներկայացված պարզաբանման, գնումների պլանում 439 չափաբաժինները ներկայացվել են 55 չափաբաժնում /ներկայացվել են CPV դասակարգման երրորդ մակարդակ/, քանի, որ որոշ

չափաբաժինների արժեք ամբողջ տարվա համար կազմում է 10 ՀՀ դրամ /օրինակ ռադիոդեպոզիտները՝ էլեկտրական դիմադրություն/: Պայմանագրի արժեքը նվազել է կապված գործընկերոջ գործունեության դադարեցման հետ, որի մասին տեղյակ է պահվել նախօրոք:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

6.1.2 Համաձայն «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի և «Պետրովիչ» ՍՊԸ-ի միջև 17.02.2021թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման ԳՈՒ4-ՄԱ-ԱՊԶԲ03/21 պայմանագրի, ինչպես նաև 05.03.2021թ. կնքված համաձայնագրի, տեղի է ունեցել փոփոխություն ՊՈԱԿ-ի և 3.1 կետում («Պայմանագրի գինը և վճարման կարգը») և հավելվածներում: Աճել է պայմանագրի գինը՝ 405.5 հազ. դրամից դառնալով 490.4 հազ. դրամ, ավելացել է գնվող ապրանքների քանակը և տեսականին: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Համլետ Ավետիսյան Ա/Ձ-ի գործունեության դադարեցման հետ կապված որոշ տեսակի ապրանքների գնման համար կնքվել է համաձայնագիր Պետրովիչ ՍՊԸ-ի հետ, իսկ մնացածի համար՝ նոր պայմանագրեր այլ գործընկերների հետ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

6.1.3 Համաձայն «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի և «Համլետ Ավետիսյան» ԱՁ-ի միջև 18.02.2021թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման ԳՈՒ4-ՄԱ-ԱՊԶԲ05/21 պայմանագրի, ինչպես նաև 31.03.2021թ. կնքված համաձայնագրի, տեղի է ունեցել փոփոխություն պայմանագրի 3.1 կետում («Պայմանագրի գինը և վճարման կարգը») և հավելվածներում: Նվազել է պայմանագրի գինը՝ 464.9 հազ. դրամից դառնալով 157.9 հազ. դրամ, պակասել է գնվող ապրանքների քանակը և տեսականին:

Առկա է անհամապատասխանություն կնքված պայմանագրի 8.9 ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Պայմանագրի արժեքը նվազել է կապված գործընկերոջ գործունեության դադարեցման հետ, որի մասին տեղյակ է պահվել նախօրոք:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

6.1.4 «Երևանի թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն կատարվել է գնում

ընդամենը թվով 41 չափաբաժիններով, 2,971.7 հազ. դրամի չափով: Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում 2) 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

6.1.5 «Երևանի թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը հաշիվ ապրանքագրի հիման վրա կատարվել է թվով 22 չափաբաժիններով, 156.8 հազ. դրամի չափով գնում, որը գնումների պլանում արտացոլված է մեկ չափաբաժնով (Գնումների միասնական անվանացանկով սահմանված միջանցիկ ծածկագիրը և անվանումը չի լրացվել անվանացանկի չորրորդ մակարդակին համապատասխան), ինչպես նաև բացակայում է պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված և հաստատված գնման հայտը: Առկա են անհամապատասխանություններ Որոշում 1-ի 3-րդ հավելվածի 2-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի և Որոշում 2-ի 3-րդ բաժնի 11-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ «Երևանի թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի պարզաբանման, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված թերացումները և բացթողումները հաշվի կառնվեն և կբացառվեն: Միաժամանակ, ՊՈԱԿ-ը տեղեկացնում է, որ գնման գործընթացի մասնակիցներից որևէ կողմի շահերը չի ոչնչահարվել:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

6.1.6 «Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն կատարվել է գնում ընդամենը թվով 15 չափաբաժիններով, 429.5 հազ. դրամի չափով: Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և Որոշում 2-ի 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ «Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի պարզաբանման, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից

արձանագրված թերացումները և բացթողումները հաշվի կառնվեն և հետագայում կբացառվեն:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

6.1.7 «Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ը կատարել է գնում «Սադոյան» ՍՊԸ-ից 291.0 հազ. դրամի՝ գնում առանց գնումների պլանում ներառելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 16 կետի պահանջի հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «ՊՈԱԿ-ի կողմից «Սադոյան» ՍՊԸ-ից ձեռքբերված ապրանքները ներառվել են գնումների պլանում, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով գնման գործընթացը սկսել է նախքան գնման առարկան գնումների պլանում ներառված լինելը, և գնումների պլանը ուշ է հրապարակվել տեղեկագրում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություններ:

6.1.8 «Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ում բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Տեղեկացնում ենք նաև, որ «Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից գնման նպատակով կատարված գործողությունների գնման հայտերը էլեկտրոնային տարբերակով առկա են և պահպանվում են:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանում, որում մասնակիցներին ուղարկվող հրավերների փոխարեն ներկայացվել է գնման գործողությունների հայտերի էլեկտրոնային տարբերակով առկայության մասին:

6.1.9 «Երևանի Ռոմանոս Մելիքյանի պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ բացակայում են էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ

Օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և Որոշում 2-ի 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ ՊՈԱԿ-ի պարզաբանման, մեկ անձից գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով՝ կազմելով և հաստատելով գնման պայմանագրերը, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրություններն ու պայմանագրերի արդյունքը, գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները՝ այսուհետ գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին (մասնակիցներին) էլեկտրոնային եղանակով կուղարկվեն հրավերները և կհրապարակվեն տեղեկագրում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

6.1.10 «Երևանի Ռոմանոս Մելիքյանի պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ում ՀՀ ֆինանսների նախարարության (Client-Treasury) համակարգի և ՊՈԱԿ-ի հաշվապահական ծրագրի (այսուհետ՝ ՀԾ) շրջանառության տեղեկագրերի հաշիվների գումարները չեն համընկնում: Առկա է անհամապատասխանություն Նախարարության և «Երևանի Ռոմանոս Մելիքյանի պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջև «Ուսանողական նպաստ տրամադրելու մասին» թիվ 03.02.01-44 պայմանագրի 3.3 կետի պահանջի հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ ՊՈԱԿ-ի պարզաբանման, ՀՀ ֆինանսների նախարարության (Client-Treasury) համակարգի 4727 հոդվածով ուսանողական կրթաթոշակի մասով 5,650,500 ՀՀ դրամ գումարը ներառվել է շրջանառության տեղեկագրի 04727 և 0474 արտահոսքի երկու տողերում, միասին կազմելով 5,659,500 ՀՀ դրամ: Հաշվապահական փաստաթղթերը վարվում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

6.1.11 «Երևանի օլիպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից հաշվապահական հաշվառումն առանձնացված չի վարվում, մասնավորապես՝ պետական բյուջեից ֆինանսավորված «Հիմնական մասնագիտացված հանրակրթության» և «Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն» ծրագրերի գծով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության (Client-Treasury) համակարգի և «Երևանի օլիպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի ՀԾ շրջանառության տեղեկագրերի հաշիվների գումարները չեն համընկնում:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ ՊՈԱԿ-ի պարզաբանման, ՀՀ ֆինանսների նախարարության (Client-Treasury) համակարգի և «Երևանի օլիպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի ՀԾ շրջանառության տեղեկագրերի հաշիվների գումարները համապատասխանեցվել են:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

6.1.12 Նախարարության «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունը ծրագիրն իրականացնելիս 126,603.1 հազ. դրամ գումարի չափով պահում է իր հաշվին, իսկ Նախարարության համար բյուջեի կատարողականում դիտվում է որպես դրամարկղային ծախս: 2021թ. ինն ամիսների արտացոլված գումարների ընդամենագրերի սինթետիկ մակարդակները («Դրամարկղային ծախս» և «Փաստացի ծախս» սյուներ) համապատասխանաբար չեն համընկնում բյուջեի կատարողականների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ըստ «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի /Կազմակերպություն/ 01.01.2021թ.-30.09.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացված տվյալների ճշգրտված պլանը կազմում է 1.001.320.1 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կազմում է 990.365.9 հազ. դրամ, իսկ պլանային (ճշգրտված) և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 10.9542.0 հազ. դրամ: Հարկ է նշել, որ «1115-12001.» միջոցառման ինն ամիսների ճշգրտված պլանը կազմում է 1.101.965.1 հազ. դրամ: ԿԳՄՍ նախարարության /Նախարարություն/ կողմից ներկայացված 01.01.2021թ.-30.09.2021թ. ժամանակահատվածի համար «Հիմնարկի կատարած բյուջեյային ծախսերի և բյուջեյային պարտքերի մասին» /Ձև 2/ հաշվետվությամբ ներկայացված 874.717.0 հազ. դրամ փաստացի ծախսի տողում /աճողական/ ներառված չէ 01.01.2021թ.-30.06.2021թ. ժամանակահատվածի համար «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվությամբ /Ձև 4/ արտացոլված 126.603.1 հազ. դրամ դեբիտորական պարտքը, որից առաջացել է Նախարարության և Կազմակերպության հաշվետվությունների անհամապատասխանություն: 01.01.2021թ.-31.12.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացվելիք հաշվետվություններով /Ձև 2,4/ կներկայացվեն շրջված /աճողական/ ցուցանիշները:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություններ:

6.1.13 2021թ. հունվար ամսվա կոմպլեկտավորմամբ բացակայում են «Հայաստանի պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի վերաբերյալ տեղեկատվությունը, սակայն Նախարարության կողմից ներկայացված հունվար ամսին կատարված դպրոցների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսական հաշվարկում առկա է

Ֆինանսավորում, իսկ Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 դպրոց» ՊՈԱԿ-ը հանդիսանում է հիմնական դպրոց, կոմպլեկտավորումով չկա, սակայն առկա է ֆինանսական հաշվարկ: «Երևանի Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոց» և «Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ները (թվով 402 աշակերտներ) ֆինանսավորվել են համապատասխանաբար՝ 105,933.0 հազ. դրամ և 110,820.4 հազ. դրամ, տարբերությունը կազմում է 4,887.4 հազ. դրամ, իսկ թվով 401 աշակերտներ ունեցող «Երևանի Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամը ֆինանսավորվել է 111,296.8 հազ. դրամ: «Գյումրու Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ-ն ունի 890 աշակերտ, իսկ «Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը՝ 814 աշակերտ: «Գյումրու Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ-ը 76 աշակերտով ավել է «Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտների թվից, սակայն ֆինանսավորվել է 36,950.7 հազ. դրամով պակաս: Միաժամանակ, «Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (886 աշակերտ) և «Երևանի Գ. Գուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի (786 աշակերտ) ֆինանսավորումները: «Երևանի Գ. Գուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը 99 աշակերտով պակաս լինելու պարագայում ֆինանսավորումը հաշվարկվել է գրեթե հավասար:

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշմամբ սահմանված բանաձևի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021թ. հունվարի 27-ի թիվ 66-Ա/2 հրամանի պահանջների և 2021թ. հունվարի դասարանների և աշակերտների կոմպլեկտավորումների միջոցով Նախարարության կողմից կատարված հաշվարկների միջև:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «2021 թ. հոկտեմբերի 21-ին և դեկտեմբերի 6-ին նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետի կողմից բացատրությունն ու պարզաբանումն ուղարկվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության գլխավոր մասնագետի էլեկտրոնային փոստի հասցեին (կցվում է լուսապատճենը):»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություններ, իսկ «Հայաստանի պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի մասով արձագանքը բացակայում է:

6.1.14 Նախարարության կողմից թվով 10 մասնագիտացված դպրոցների 2021թ. հունվար և սեպտեմբեր ամիսների աշակերտների կոմպլեկտավորումները, ֆինանսական հաշվարկները, ինչպես նաև՝ կատարված վերաբաշխումները հաշվեքննությանը ոչ ամբողջական և թերի են տրամադրվել:

Առկա է անհամապատասխանություն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Արձագանքը բացակայում է:»

6.1.15 Նախարարության Ծրագիր 1-ի թվով 3, Ծրագիր 2-ի թվով 3, Ծրագիր 7-ի թվով 1 և Ծրագիր 11-ի թվով 3 ՊՈԱԿ-ների կողմից հաշվապահական հաշվառումը ՀԾ շրջանակներում առանձնացված չի վարվել, սինթետիկ և անալիտիկ մակարդակներում պետական բյուջեից ֆինանսավորման հետ մեկտեղ ներառվել են նաև արտաբյուջետային միջոցները (ուսման վարձեր և այլն): ՊՈԱԿ-ների կողմից Նախարարությանը ներկայացվող տեղեկատվությունը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով սահմանված ձևաչափին, որի արդյունքում ՊՈԱԿ-ների և Նախարարության կողմից հաշվեքննության շրջանակներում ներկայացվող ֆինանսական ելակետային տվյալների միջև առկա է տարբերություն, բարդացնելով փաստացի և դրամարկղային ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվարկների ճշգրտության, իրավասության և արժանահավատության գնահատումը:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ձևակերպումը ընդհանուր է ներկայացված, մինչդեռ կարելի էր մանրամասնել, և ցույց տալ, թե կոնկրետ, որ մակարդակում, որն է սխալ ձևակերպված: Նշված 3 կազմակերպությունները ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում 2 տարբեր ծրագրերից, ինչպես նաև ձևավորելով իրենց արտաբյուջեն: ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով սահմանված ձևաչափերի ՊՈԱԿ-ները Նախարարություն են ներկայացնում ՀՀ պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն, իսկ ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թ. փետրվարի 4-ի N 104-Ն հրամանով ՊՈԱԿ-ները Նախարարություն են ներկայացնում իրենց ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվություններ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

6.1.16 Նախարարության 2021թ. ինն ամիսների Ծրագիր 3-ում դրամարկղային ծախսը 163,815.9 հազ. դրամով գերազանցել է փաստացի ծախսին, ըստ որի Ծրագիր 3-ի 472700 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածում դեբիտորական պարտքերն աճել են 151,108.7 հազ. դրամով (տարեսկզբին՝ 81,972.2 հազ. դրամ, ինն ամիսների ավարտի դրությամբ՝ 233,080.9 հազ. դրամ), իսկ կրեդիտորական պարտքեր չեն հաշվառվել: 2021թ. ինն ամիսների Ծրագիր 3-ում դրամարկղային ծախսերի՝ փաստացի ծախսերի նկատմամբ 163,815.9 հազ. դրամով գերազանցումը չի համընկնում ընթացիկ գործունեության արդյունքում տարվա սկզբի համեմատ հաշվետու ժամանակաշրջանի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվարկին: Այսպես, տարեկզբի համեմատ 2021թ. ինն ամիսների ավարտին դեբիտորական պարտքերն աճել են

151,108.7 հազ. դրամով (81,972.2 - 233,080.9)՝ կրեդիտորական պարտքերի բացակայությամբ: Նախարարության 2021թ. ինն ամիսների Ծրագիր 3-ում փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերության (163,815.9 հազ. դրամ) և հաշվետու ժամանակաշրջանի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվարկի (151,108.7 հազ. դրամ) միջև առկա է 12,707.2 հազ. դրամի անհամապատասխանություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «ԲՈՒՀ-երը յուրաքանչյուր տարվա սկզբում ՀՀԿԳՄՍ նախարարության հետ կնքում են պայմանագիր ուսանողական նպաստներ ստանալու համար: Հաշվեգրումը իրականացնում են ամսեկան կտրվածքով՝ նախնական պայմանագրի թիվը բաժանելով 12 ամիսների՝ հետագայում ճշգրտելով վերջնական համաձայնագրով ճշգրտված ուսանողների միջին տարեկան թվի հետ: Հետևաբար դեբիտորական պարտքը տվյալ տարվա վերջում որպես կանոն կամ նվազում է կամ հավասարվում գրոյի, եթե ուսանողների թվակքանակը պայմանագրի հետ շեղումներ չի տալիս:

Իսկ 12,707.2 հազ.դրամը 2020 թ. տարեվերջի հաշվետվության մեջ տեխնիկական սխալի արդյունք է, որը տեղափոխվել էր 2021 թ. տարեակիզբ, կատարվել է ճշգրտում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրամադրվել են բացատրություններ:

6.1.17 Նախարարության Ծրագիր 11-ում ընդգրկված թվով 35 մարզադպրոցները հաշվապահական հաշվառումը ՀԾ-ի համակարգով չեն վարում, ներկայացված տվյալները թերի և ոչ լիարժեք են: Առկա են անհամապատասխանություններ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 463-Ն հրամանի հավելվածով սահմանված ժամկետների ու պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Մարզադպրոցներին համակարգիչներով և ՀԾ-ի համակարգով ապահովելու հարցը մշտապես եղել է նախարարության ուշադրության կենտրոնում, և դեռևս 2019 թ. նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել որոշման նախագիծ, որը նախատեսում էր մարզադպրոցներին գումարներ տրամադրել ՀԾ-ի համակարգ և համակարգիչներ ձեռքբերելու համար: 2019թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ կառավարությանն է ներկայացվել համապատասխան որոշման նախագիծ, սակայն մերժվել է: Նախարարությունը կփորձի 2022թ. ընթացքում գտնել լուծումներ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրամադրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

2021թ. ինն ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 16 անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը ներկայացրել է թվով 3 առարկություններ, որոնք հաշվեքննողների կողմից չեն ընդունվել: Թվով 1 անհամապատասխանության վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի արձագանքը բացակայում է, իսկ թվով 13-ի մասով՝ առարկությունները չեն ներկայացվել, տրամադրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների հաշվեքննությամբ պարզվել է, որ.

7.1.1 Ծրագիր 1-ի 2021թ. ինն ամիսների ճշտված պլանն ըստ Նախարարության կողմից տրամադրված Հավելված 6-1-ի և ֆինանսական հաշվետվության, կազմում է 1,772,918.2 հազ. դրամ, սակայն ըստ Հավելված 1-1-ի (Ծրագիր 1-ում ընդգրկված ՊՈԱԿ-ների ճշտված պլաններ) այն հավասարվել է ֆինանսավորմանը և կազմել է 1,617,561.4 հազ. դրամ: Տարբերությունը կազմել է 155,356.8 հազ. դրամ և ըստ Ծրագիր 1-ի համար ֆինանսական հաշվետվության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ»-ի թիվը 35 է, սակայն Նախարարության կողմից տրամադրված Հավելված 1-1-ի (Ծրագիր 1-ում ընդգրկված ՊՈԱԿ-ների ճշտված պլաններ) 34 է:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 2021թ. ինն ամիսների վերաբերյալ պահանջվող տեղեկությունների Հավելված 1-1 ձևաչափում արտացոլված է եղել 34 կազմակերպություն: Նախարարությունը ներկայացրել է ըստ ներկայացված ձևաչափի: Մինչդեռ Նախարարությունն ունի 35 պետական ուսումնական հաստատություններ: Տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, Նախարարությունը տարվա կտրվածքով կներկայացնի 35 կազմակերպության վերաբերյալ տեղեկատվություն:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրվել է պարզաբանում:

7.1.2 Նախարարության 2021թ. ինն ամիսների Ծրագիր 2-ի ընթացիկ գործունեության արդյունքում տարվա սկզբի համեմատ հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կազմակերպությունների կողմից դրամական միջոցների մնացորդներով պայմանավորված դեբիտորական պարտքերի (136,014.9 հազ. դրամ) և կրեդիտորական պարտքերի (257,859.7 հազ. դրամ) աճերի բացարձակ տարբերությունը կազմել է 121,844.8 հազ. դրամ: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի բացարձակ հաշվարկը 2,873.4 հազ. դրամով (121,844.8 - 118,971.4) չի համընկնում դրամարկղային և փաստացի ծախսերի միջև առաջացած տարբերության հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի բացարձակ հաշվարկը 2,873.4 հազար դրամով դրամարկղային և փաստացի ծախսերի միջև առաջացած տարբերության հետ (208,272.3 – 211,145.7 = 2,873.4) չհամընկնելը կապված է այն հանգամանքի հետ, որ «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տարեսկզբի դեբիտորական պարտքը 2873.4 հազար դրամով ճիշտ չի ձևակերպվել: Միաժամանակ, հայտնում ենք, որ ճշգրտումը կատարվել է տարեսկզբին, և ածողական կարգով մինչև 2021 թ. տարեկանը ներառյալ անճշտությունն արտացոլվելու է:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություն:

7.1.3 Համաձայն Նախարարության Ծրագիր 2-ի ոչ ֆինանսական, արդյունքին միտված չափորոշիչների հաշվետվության, 2021թ. տարեկան նախատեսված ուսանողների թիվը կազմել է 22112, իսկ ինն ամսվա կտրվածքով նախատեսվել և փաստացի այն կազմել է 20404 ուսանողներ (տարբերությունը՝ 1708 ուսանողներ): Ըստ Նախարարությունից ստացված տեղեկատվության (Հավելված 2-3) թվով 77 կազմակերպությունների 2021թ. ինն ամիսների ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների գծով ՀՀ Ֆինանսների նախարարության շտեմարանների ընդամենագրերի, ինչպես նաև Ծրագիր 2-ի 2021թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ըստ կազմակերպությունների և ըստ ընդամենագրի փաստացի ուսանողների (սովորողների) թվաքանակների շարժի, առաջանում են տարբերություններ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Հաշվեքննիչ պալատի արձանագրված տարբերության մեթոդաբանությունն անհասկանալի է: Անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել հաշվարկման մեթոդաբանությունը: Պահանջված (Հավելված 2-3) թվով 77 կազմակերպությունների 2021թ. ինն ամիսների ոչ ֆինանսական արդյունքի ցուցանիշները փոքր են ՀՀ Ֆինանսների նախարարության շտեմարանների ընդամենագրերում ընդգրկված ծրագրերով ֆինանսավորվող 79 կազմակերպությունների թվից: Հետևաբար, պետք է առաջանար տարբերություն:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

7.1.4 Նախարարության Ծրագիր 4-ում սուբսիդավորվող ընտանիքների, վարկառուների 2021թ. տարեկան թիվը նախատեսվել էր թվով 6743, սակայն ճշգրտումից հետո այն կազմել է՝ 6443, նվազեցումը կազմել է՝ 300 սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ: Հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված թվով 5055 (1,200,675.0 հազ. դրամ) սուբսիդավորվող ընտանիքներից, վարկառուներից 2021թ. ինն ամիսների համար ճշտված պլանով կազմել է 4955 (1,101,965.1 հազ. դրամ), իսկ փաստացին կազմել է 3989 սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ (1,001,320.1 հազ. դրամ), տարբերությունը՝ 996-ով (100,645 հազ. դրամ) պակաս սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ, սակայն ֆինանսավորված գումարները մնացել են նույնը:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Սուբսիդավորվող ընտանիքների, վարկառուների 2021թ.-ի տարեկան թիվը կանխատեսվել էր թվով 6235 (1,600,900.0 հազ. դրամ), սակայն ճշգրտումից հետո այն կազմել է թվով 5725 (1,300,900.0 հազ. դրամ), նվազեցումը կազմել է թվով 510 սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ (300,000.0 հազ. դրամ): Հաշվետու ժամանակաշրջանի համար կանխատեսված թվով 4676 (1,200,675.0 հազ. դրամ) (ճշգրտված՝ թվով 4293 (1,001,320.1 հազ. դրամ) սուբսիդավորվող ընտանիքներից, վարկառուներից 2021թ. ինն ամիսների համար փաստացին կազմել է 3989 սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ (990,365.9 հազ. դրամ), տարբերությունը՝ թվով 304-ով (10,954.2 հազ. դրամ) պակաս՝ 2021թ.-ի տարեկան կանխատեսված ու ճշգրտված և փաստացի սուբսիդավորվող ընտանիքներ, վարկառուներ: Նշված տեղեկատվությունը «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից Նախարարությանը ներկայացվել է 2021 թ. հոկտեմբերի 4-ի թիվ ԿԳՆ-087 գրությամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.5 Հաշվեքննության ընթացքում՝ ըստ Նախարարության Ծրագիր 8-ի մասով ծառայություններ մատուցող մասնագիտացված թվով 13 կազմակերպություններից (այսուհետ՝ Թատրոններ) ստացված տեղեկատվության, հաշվետու ժամանակաշրջանում ներկայացումների համար վաճառված տոմսերի ընդհանուր քանակը կազմել է 140472 կամ հանդիսատեսի 70.5%-ը, հրավիրատոմսերի քանակը՝ 21183 կամ 10.6%-ը, իսկ աբոնեմենտներով ներկայացումների մասնակիցների քանակը՝ 37616 մարդ կամ 18.9%-ը: Դահլիճների ընդհանուր նստատեղերի քանակը 4345 է, որից մեծ դահլիճների մասով 4174, փոքր դահլիճների մասով՝ 171: 2021թ. ինն ամսվա արդյունքներով Նախարարությունը ներկայացրել էր հետևյալ տեղեկատվությունը՝ դահլիճների ընդհանուր նստատեղերի քանակը 4449 է, որից մեծ դահլիճների մասով 4130, փոքր դահլիճների մասով՝ 319:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության մեջ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» ՊՈԱԿ-ի փաստացի հանդիսատեսի թվաքանակը 2847-ի

փոխարեն պետք է լինի 2547: Բացի այդ, Նախարարությունը Ծրագիր 8-ի մասով ներկայացրել էր հետևյալ տեղեկատվությունը՝ դահլիճների ընդհանուր նստավայրերի քանակը 4449-ի փոխարեն 4590/ներառյալ՝ «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ/, որից մեծ դահլիճների մասով 4419, փոքր դահլիճների մասով՝ 171/Հիմք՝ ԿԳՄՄՆ թիվ՝ 08.1/17.2/26790-2021, 18.11.2021 թ. ելից գրություն, ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ (ԹԱՏՐՈՆ) 2021թ. 9 ԱՄԻՍ՝ ՀԱՎԵԼՎԱԾ՝ 1-2/»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունը չի ընդունվում:

7.1.6 Թատրոնների կողմից հրավիրատոմսերի տրամադրման (վաճառված տոմսերի նկատմամբ 0 տոկոսից մինչև 27%-ը), տոմսերի արժեքների սահմանման (միջինը՝ 500 դրամից մինչև 3080 դրամը) և աբոնեմենտների բաշխման (վաճառված տոմսերի նկատմամբ 0 տոկոսից մինչև 41%-ը) հարցում առկա է Նախարարության քաղաքականությունն ու դիրքորոշումը: Մասնավորապես՝ «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի մեկ տոմսի միջին կիսամյակային արժեքը կազմել է 3080 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ մնացած թատրոնների տոմսերի միջին արժեքը կազմել է ընդամենը 1181 ՀՀ դրամ, իսկ աբոնեմենտ չեն տրամադրել: Նախարարության դիրքորոշումը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Թատրոնների հրավիրատոմսերի և վաճառված տոմսերի մասով հայտնում ենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը որևէ միջնորդություն և հատուկ դիրքորոշում չունի: ՊՈԱԿ-ները ինքնուրույն են կառավարում իրենց տոմսային տնտեսությունը: «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ը հաշվառված է աբոնեմենտային ծրագրի շրջանակներում, քանի որ ներկայացումները միայն 18 փարեկանից բարձր փարիք ունեցող անձանց համար են:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.7 Հաշվեքննության ընթացքում թվով 10 համույթներից ընտրանքային կարգով ուսումնասիրվել են «Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» և «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ-ները: Վերջիններիս 2021թ. ինն ամիսների պլանը, ճշտված պլանը, ֆինանսավորումն ու դրամարկղային ծախսը ընդհանուր կազմել են 110,404.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ ընդամենը՝ 93,216.8 հազ. դրամ, տարբերությունը կազմել է 17,187.2 հազ. դրամ՝ ձևակերպվելով դեբիտորական պարտք:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Դեբիտորական պարտքը ընթացիկ գործունեության արդյունքն է, որը կմարվի չորրորդ եռամսյակում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.8 «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ-ում ընդհանրապես տոմսեր չեն վաճառվել՝ բոլոր 175 այցելուներն օգտվել են հրավիրատոմսերից, ընդ որում՝ ըստ

ներկայացված տեղեկատվության, վաճառված տոմսերի միջին կիսամյակային արժեքը կազմել էր 1245 դրամ, իսկ «Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» ՊՈԱԿ-ը իր այցելուների միայն 8,3 տոկոսին (240 այցելու) է տոմսեր վաճառվել, մնացածն (2630 այցելու) օգտվել են հրավիրատոմսից: «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ-ում 2021թ. ինն ամիսների ընթացքում նախատեսված է եղել 3192 այցելու, փաստացի այցելել են 175 հանդիսատես, բոլորն էլ՝ հրավիրատոմսերով: Հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված թվով 38 համերգներից իրականացվել է 1-ը, նախատեսված թվով 1 նոր համերգը չի կայացել, դահլիճի միջին բեռնվածությունը մեկ համերգի և 175 նստատեղի պայմաններում կազմում է 100,0%, սակայն հրապարակվել է 94,6%:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. ««Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի բացադրությունները կցվում են (3 էջ):»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.9 «Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» ՊՈԱԿ-ում 2021թ. ինն ամիսների ընթացքում նախատեսված է եղել 2550 այցելու, փաստացի այցելել են 2870 հանդիսատես, որից 240-ը (8,4%) գնել են տոմս, իսկ 2630-ը (91,6%)՝ հրավիրատոմսերով, աբոնոմենտներով այցելուներ չկան: Հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված թվով 17 համերգներից իրականացվել է 13-ը, նախատեսված թվով 1 նոր համերգի դիմաց իրականացվել է 4-ը: 200 նստատեղի պայմաններում դահլիճի բեռնվածությունը նախատեսված 75%-ի փոխարեն հաշվետվությամբ ներկայացվել է 110,0%:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. ««Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» ՊՈԱԿ-ի 2021 թ.-ի ցածր ցուցանիշները պայմանավորված են այն փաստով, որ Հայաստանի պետական ջազ նվագախումբը չունի սեփական փորձադեղի և համերգային դահլիճ: ՊՈԱԿ-ը ինքնուրույն չի իրականացնում տոմսերի վաճառք՝ պայմանագրային գումարը բաժանվում է ԿԳՄՄՆ հաստատված տոմսերի քանակին: Հրավիրատոմսերի գերազանցող թիվը պայմանավորված է կոնսերվատորյաի ուսանողներին անվճար տրամադրվող տեղերով, ինչպես նաև նվագախմբի հյուրերի թվով՝ ջազային երաժշտության համերգների տոմսերի պահանջարկը կտրուկ նվազեց COVID-19 համավարակի և 2020-2021թթ. հետպատերազմական շրջանի հետ կապված իրավիճակից: Դահլիճի բեռնվածության 110%-ը պայմանավորված է Արամ Խաչատրյան համերգասրահում համերգների առկայությամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.10 Նախարարության Ծրագիր 10-ում թվով 8 ավագ և թվով 272 միջնակարգ ու հիմնական դպրոցներում 2021թ. ինն ամիսներին վարկային միջոցների և համաֆինանսավորման հանագումարով սահմանված ճշտված պլանի և փաստացի ֆինանսավորված ընդամենը 2,820,139.2 հազ. դրամի պայմաններում դրամարկղային

ծախսը ձևակերպվել է ընդամենը 1,956,397.6 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը ընդհանուր կազմել է 2,329,990.6 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում 2021թ. հունիսի 15-ին ՀՀ պետական բյուջեով ըստ հայտերի նախատեսված հատկացումների վերաբաշխում կատարելու սահմանված կարգով իրականացվել է միջհոդվածային (512900 հոդվածից նվազեցնելով և 511300 հոդվածում ավելացնելով) 28,000.0 հազ. դրամի փոփոխություն, որից 5,600.0 հազ. դրամը ՀՀ պետական բյուջեից, իսկ 22,400.0 հազ. դրամը՝ վարկային միջոցներից: Նշված փոփոխության նպատակահարմարության և անհրաժեշտության հիմնավորումները պարունակում են ռիսկեր:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» և 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև միջհոդվածային վերաբաշխման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել հետևյալ հանգամանքով. 2021թ.-ին 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսված 8 ավագ դպրոցների համար լաբորատոր սարքավորումների և գույքի, ինչպես նաև ընտրված ՀՀ հանրակրթական և ավագ դպրոցների համար համակարգչային սարքավորումների գնման նպատակով իրականացված մրցույթների ամփոփման արդյունքում առաջացել է տնտեսում ընդամենը 28000,0 հազար ՀՀ դրամ գումարի չափով (այդ թվում վարկային միջոցներից 22400,0 հազար ՀՀ դրամ, իսկ համաֆինանսավորման միջոցներից՝ 5600,0 հազար ՀՀ դրամ): Նշված տնտեսված գումարը 2021թ. հունիսի 15-ին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ ֆինանսների նախարարություններ ներկայացրած «ՀՀ 2021թ. պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխում կատարելու» հայտերի հիման վրա վերաբաշխվել է նույն միջոցառման 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդված՝ հաշվի առնելով որոշ ավագ դպրոցների հիմնանորոգման ընթացքում 2021թ.-ին առաջացած լրացուցիչ անհրաժեշտ աշխատանքների ծավալը և ծրագրով նախատեսված 8 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները ամբողջությամբ ավարտին հասցնելու նպատակով: Վերոնշյալ վերաբաշխումն իրականացվել է երրորդ եռամսյակի ցուցանիշներում, որի արդյունքում «1192-32002» միջոցառման ընդամենը գումարի փոփոխություն չի առաջացել, իսկ վերաբաշխված գումարը կազմել է «1192-32002» միջոցառման ընդհանուր գումարի շուրջ 1%-ը:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունն ընդունվում է:

7.1.11 «Թիավարության մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների պլանը կազմել է 43,377.9 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը (նաև՝ դրամարկղային ծախսը)՝ 44,815.2 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 46,996.9 հազ. դրամ, աճելով 2,181.7 հազ. դրամով, որը դեբիտորական պարտքերի տարեսկզբի մնացորդի նկատմամբ 2,398.6 հազ. դրամի աճի և կրեդիտորական պարտքերի տարեսկզբի մնացորդի նկատմամբ

4,580.3 հազ. դրամի աճի բացարձակ տարբերությունն է: Հիշատակված ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների սաների նախատեսված և փաստացի թվերի ընդհանուր տարբերությունը կազմել է հինգ սան (նախատեսված թվով 382 սաների համեմատ փաստացի թիվը արձանագրվել է 396, այդ թվում տղաներ՝ նախատեսված 240-ի փոխարեն 245 և աղջիկներ՝ նախատեսված 50-ը նաև արձանագրվել է փաստացի): Նշված պայմաններում արձանագրվել է, որ փաստացի ծախսը 2,181.7 հազ. դրամով գերազանցել է դրամարկղային ծախսին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «239.5 հազ. դրամի տարբերության պատճառը «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի տարեսկզբի դեբիտորական պարտքի ոչ ճիշտ արտացոլումն է: «Թիավարության մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021 թ. ինն ամիսների հաշվետվության մեջ կան տարբերություններ, որոնք առաջացել են 4111 հոդվածով սեպտեմբեր ամսվա համար փաստացի հաշվարկված և վճարման ենթակա աշխատավարձով: Մարզադպրոցի սաների թվի աճը պայմանավորված է 2021-2022թթ. ուս տարվա մարզադպրոց սաների ընդունելությամբ և կոմպլեկտավորմամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություններ:

7.1.12 Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանի տեղեկատվության՝ Ծրագիր 11-ի 2021թ. ինն ամիսների ոչ ֆինանսական, արդյունքին միտված նախատեսված ցուցանիշը կազմում է 17200 սան (11700 տղաներ և 5500 աղջիկներ): Նախարարությունից հաշվեքննողի հարցմամբ (Հավելված 2-2) ստացված տեղեկատվության համաձայն Ծրագիր 11-ի 2021թ. ինն ամիսների ոչ ֆինանսական, արդյունքին միտված նախատեսված ցուցանիշն արձանագրվել է 17571 (11922 տղաներ և 5649 աղջիկներ), տարբերությունը՝ 371 սաներ (222 տղաներ և 149 աղջիկներ): Իսկ, համապատասխանաբար, փաստացի ցուցանիշը ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանում կազմել է 17400 (11836 տղաներ և 5564 աղջիկներ), սակայն ըստ Նախարարության տրամադրված տեղեկատվության՝ այն կազմում է 17398 սաներ (11642 տղաներ և 5756 աղջիկներ), տարբերությունը՝ 2 սաներ (թվով 194 տղաների թվի նվազում և թվով 192 աղջիկների թվի աճ):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Փաստացի թվով 35 կազմակերպությունների 2021 թ. արդյունքային ցուցանիշները ամփոփելուց հետո կներկայացվի ճշգրտված ցուցանիշներով տեղեկատվություն:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.12 «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների պլանը կազմել է 40,163.4 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը (նաև՝ դրամարկղային ծախսը)՝ 41,121.2 հազ. դրամ, իսկ փաստացի

ծախսը կազմել է 44,135.3 հազ. դրամ, աճելով 3,014.1 հազ. դրամով, որը դեբիտորական պարտքերի տարեսկզբի մնացորդի նկատմամբ 572.8 հազ. դրամի աճի և կրեդիտորական պարտքերի տարեսկզբի մնացորդի նկատմամբ 3,586.9 հազ. դրամի աճի բացարձակ տարբերությունն է: Նշված ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների սաների նախատեսված և փաստացի թվերի ընդհանուր տարբերությունը կազմել է տասնչորս սան (նախատեսված թվով 382 սաների համեմատ փաստացի թիվը արձանագրվել է 396, այդ թվում տղաներ՝ նախատեսված 368-ի փոխարեն 373 և աղջիկներ՝ նախատեսված 14-ի փոխարեն 23): Նշված պայմաններում արձանագրվել է, որ փաստացի ծախսը 3,014.1 հազ. դրամով գերազանցել է դրամարկղային ծախսին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. ««Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021 թվականի ինն ամիսների հաշվեկշիռային մեջ կան տարբերություններ, որոնք առաջացել են 4111 հոդվածով սեպտեմբեր ամսվա համար փաստացի հաշվարկված և վճարման ենթակա աշխատավարձով և 4823 հոդվածով սեպտեմբեր ամսվա աղբահանության վճարով, որոնք դիտվել են որպես կրեդիտորական պարտք 30.09.2021թ.-ի դրությամբ, իսկ դեբիտորական պարտքի տարեսկզբի նկատմամբ տարբերությունը առաջացել է 4212 հոդվածով տարեվերջի մնացորդի հաշվին կատարված ջեռուցման ծախսով: 2021թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում մարզադպրոցի սեղանի թենիսի, բադմինթոնի և շախմատի խմբեր են ընդունվել 9 աղջիկներ, իսկ ձյուդոյի և հունահռոմեական ըմբշամարտի խմբեր են ընդունվել 4 տղաներ: Ընդհանուր սեպտեմբերի 30-ի դրությամբ ընդունվել է 14 սան:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

7.1.13 «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների պլանը կազմել է 21,380.0 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը (նաև՝ դրամարկղային ծախսը)՝ 22,766.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 22,310.4 հազ. դրամ, նվազելով 456.1 հազ. դրամով, որը դեբիտորական պարտքերի տարեսկզբի մնացորդի նկատմամբ 2,381.0 հազ. դրամի աճի և կրեդիտորական պարտքերի տարեսկզբի մնացորդի նկատմամբ 1,924.9 հազ. դրամի աճի բացարձակ տարբերությունն է: Նշված ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների սաների նախատեսված և փաստացի թվերի ընդհանուր տարբերությունը կազմել է տասներկու սան (նախատեսված թվով 152 սաների համեմատ փաստացի թիվը արձանագրվել է 164, այդ թվում տղաներ՝ նախատեսված 149-ի փոխարեն 160 և աղջիկներ՝ նախատեսված 3-ի փոխարեն 4): Նշված պայմաններում արձանագրվել է, որ դրամարկղային ծախսը 456.1 հազ. դրամով գերազանցել է փաստացի է ծախսին:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամսվա արձանագրված դրամարկղային ծախսի գերազանցումը 456.1 հազար դրամի չափով գոյացել է 2021թ. որոշ սպորտային միջոցառումների կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված

չկայանալու արդյունքում, որը 2021թ. տարեվերջին հետ է փոխանցվել պետական բյուջե: «Վանաձորի բոնցքամարտի մանկապարտենկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի 2021թ. ինն ամիսների սաների նախատեսված և փաստացի թվերի ընդհանուր տարբերությունը կազմել է 12 սան, որը պայմանավորված է 2020-2021թթ. կոմպլեկտավորման պլանի փոփոխությամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանումներ:

2021թ. ինն ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 13 այլ փաստերի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը ներկայացրել է թվով 3 առարկություններ, որոնք հաշվեքննողների կողմից չեն ընդունվել 2-ը: Թվով 1 այլ փաստի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի առարկությունը հաշվեքննողների կողմից ընդունվել է: Հաշվեքննության օբյեկտի կողմից թվով 13 այլ փաստերի վերաբերյալ առարկությունները չեն ներկայացվել, տրամադրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱԶԱԲ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունվի / Ընդունվի չէ	Կատարվում է / Կատարվում չէ	Հ ի մ ն ա վ ո Ր ու մ ն ե Ր (Նախարարության 2021թ նոյեմբերի 30-ի թիվ 01/17.2/27932-21 գրություն)
				5
1	Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության վրա՝ պահանջված ձևաչափերի համապատասխանության և ճշգրտության առումներով:	Ընդունվի չէ	Ընթացքում է	Հաշվի առնելով պահանջվող տեղեկատվության ծավալները, բազմազանությունը՝ ձևաչափերի լրացման համար պահանջվում է ավելի երկար ժամանակ, քան դրանց տրամադրման համար, ժամկետները սուղ են, որոշ տվյալներ (հատկապես գնումների, ուսանողների նպաստների տրամադրման մասով): Տվյալների չտրամադրման, ժամկետների խախտման, ոչ ամբողջական, թերի կամ ձևաչափերին ոչ համապատասխան տրամադրման որևէ միտում առկա չէ: Միաժամանակ, հավի առնելով այն հանգամանքը, որ պահանջվող տեղեկատվության զգալի մասը ՀՀ հաշվեքննիչ պալատ կարող է վերցնել իրեն հասանելի այլ համակարգերից (օրինակ, գնումների մասով «PPCM» համակարգից, նախահաշիվները «Client Treasury» համակարգից)՝ առաջարկվում է Նախարարությունից պահանջել այնպիսի տեղեկատվություն, որոնք առկա չեն վերոնշյալ համակարգերում:

2	Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների ճշգրտության ապահովման վրա:	Ընդունելի չէ	Ընթացքում է	ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից մշակված և Նախարարությունից պահանջվող սինթետիկ և անալիտիկ մակարդակների տվյալներ ձևաչափերում ամբողջական արտացոլված չի լինում տվյալ ծրագրի մեջ ներառվող բոլոր ծախսերը: Հետևաբար, ՀՀ հաշվեքննիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների սինթետիկ և անալիտիկ մակարդակների միջև հնարավոր անճշգրտությունները լիովին բացատրելի են:
3	Ձեռնարկել միջոցառումներ Նախարարության ենթակա ՊՈԱԿ-ներում ՀԾ համակարգով հաշվապահական հաշվառման վարման լիարժեք և ամբողջական գործարկելու, իսկ մարզադպրոցներում՝ ներդրման ուղղությամբ:	Ընդունելի չէ	Ընթացքում է	Հիմք ընդունելով ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. ապրիլի 9-ի թիվ 207-Ն հրամանով հաստատված «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և դրա կիրառման հրահանգ»-ով՝ Նախարարությունը 2021թ. նոյեմբերի 11-ի իր թիվ 08.1/23/26274-2021 գրությամբ դիմել է Նախարարության ենթակա կազմակերպություններին՝ սեղմ ժամկետներում քայլեր ձեռնարկելու ՀԾ համակարգով համակարգով հաշվապահական հաշվառման վարման լիարժեք և ամբողջական ներդնելու, ինչպես նաև սինթետիկ և անալիտիկ մակարդակներում առկա անճշտությունները և սխալ ձևակերպումները շտկելու համար: Խնդիրը կայանում է նրանում, որ որոշ ՊՈԱԿ-ներում (մասնավորապես՝ մարզադպրոցներում) առկա չէ համապատասխան համակարգչային տեխնիկա, որի արդյունքում հնարավոր չի ներդնել ՀԾ հաշվապահական համակարգ: Վերջին տարիներին Նախարարությունը քայլեր է ձեռնարկել ՊՈԱԿ-ները համապատասխան համակարգչային տեխնիկայով վերազինելու և ՀԾ հաշվապահական համակարգ ներդնելու համար, սակայն մի դեպքում ՀՀ կառավարության որոշման համապատասխան նախագիծը հանվել է կառավարության նիստի օրակարգից, մյուս դեպքում էլ, Նախարարության կողմից չօգտագործվող և վերանորոգված համակարգիչները հանձնվել են հանրակրթական դպրոցներին՝ «Կովիդ 19»-ով պայմանավորված հեռավար կրթություն կազմակերպելու համար: 2021թ. նոյեմբերի 19-ին Նախարարությունը թիվ 01/17/26962-2021 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում վերավաշխում և 2020թ. դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման մեր փոփոխություն և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է նաև 23 մարզադպրոցներում

				ներդնել նյութատեխնիկական բազա՝ համակարգիչներ և անհրաժեշտ ծրագրեր՝ հաշվապահական հաշվառումն իրականացնելու համար: Այն ընդգրկվել է 30.11.2021թ. ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի օրակարգում (հարց 22):
4	Նախարարության ֆինանսական ոլորտը կարգավորող և հիմնական կառուցվածքային մասնագիտական վարչությունների կանոնադրություններում, ինչպես նաև՝ կնքվող տարեկան պայմանագրերում սահմանել այնպիսի գործառույթներ և ընթացակարգեր, պահանջվող տեղեկատվություն և ամփոփագրեր, որոնց միջոցով լիարժեք կվերահսկվեն իրականացվող միջոցառումների արդյունքում համապատասխան պարբերությամբ ձևավորվող, հաշվետվություններում ներկայացվող ֆինանսական և արդյունքին միտված, ոչ ֆինանսական ամփոփ ցուցանիշների արժանահավատությունն ու իրավասությունը:	Ընդունելի չէ	Ընթացքում է	Նախարարության կողմից կնքվող տարեկան պայմանագրերը կնքվում են 2010 թ. ապրիլի 29-ի ՀՀ կառավարության թիվ 566-Ն որոշմամբ սահմանված պայմանագրերի տիպային օրինակելի ձևի հիման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդիրը համակարգային է (վերաբերվում պետական կառավարման բոլոր մարմիններին) առաջարկում ենք խնդրի լուծումը քննարկել պայմանագրերի տիպային օրինակելի ձևը փոփոխելու համատեքստում: Քանի որ ՀՀ հաշվեքննիչ պալատը ուսումնասիրել է մասնագիտական վարչությունների կանոնադրությունները և տարեկան պայմանագրերը, Նախարարությունը ակնկալում է, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից կներկայացվեն կոնկրետ առաջարկություններ և ձևակերպումներ՝ կանոնադրություններում և պայմանագրերում ներառելու համար:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

9.1 Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվեքննության օբյեկտին տրամադրված ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրությունների՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետների (արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում) պահպանման վրա:

9.2 Ձեռնարկել միջոցառումներ, որոնք կնպաստեն Նախարարության ենթակայության կազմակերպությունների գնումների գործընթացները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և հարակից նորմատիվ-իրավական ակտերի պահանջներին:

9.3 Իրականացնել անհրաժեշտ քայլեր Նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ներում ՀԾ համակարգով հաշվապահական հաշվառման վարման լիարժեք և ամբողջական կիրառման, իսկ մարզադպրոցներում՝ ներդրման ուղղությամբ:

9.4 Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկել և սահմանել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող ֆինանսական և արդյունքին միտված ոչ ֆինանսական տարեկան (եռամսյակային) տեղեկատվության այնպիսի նոր, առավել բնորոշ և հստակ չափորոշիչներ, որոնց կիրառմամբ հիշատակված ամփոփ ցուցանիշները, ըստ Նախարարության համապատասխան ԾՐԱԳՐԵՐ-ի կատարված

ծախսերի նկատմամբ կապահովեն արժանահավատության, ճշգրտության և իրավասության ավելի բարձր մակարդակ:

9.5 Մշակել հայեցակարգ, դիրքորոշում և քաղաքականություն արվեստի և մշակույթի կազմակերպություններում իրականացվող ներկայացումների (համերգների) վաճառվող տոմսերի, հրավիրատոմսերի և աբոնոմենտների տրամադրման վերաբերյալ:

9.6 Ստեղծել այնպիսի հսկողա-վերահսկողական գործիքակազմ, որով Նախարարության Ծրագիր 5-ում ավագ դպրոցների տարեկան ֆինանսավորման գումարի հաշվարկների որոշման ժամանակ կբացառվեն սահմանված գործակիցների ճշգրիտ և միանշանակ կիրառումները՝ հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով:

9.7 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ) և միջոցառման կատարման ժամանակացույց: